ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՄԽ-05/21

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 5 նիստի

14 -ը մայիսի 2021
Ժամը 16:00
Հեռավար

Ս.թ. մայսի 14-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հեռավար նիստը՝ հեռահաղորդակցության միջոցների, մասնավորապես՝ էլեկտրոնային փոստի օգտագործմամբ, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի փաստաթղթային փուլի ավարտ և հայտերի հաստատում:
2. Հարցազրույցի օրվա, տեղի և ժամի սահմանում:
3. Հարցազույցի տևողության և հերթականության սահմանում:

Օրակարգի հարցերով զեկուցող՝ Հերիքնազ Տիգրանյան:

Նիստին մասնակցում էին Խորհրդի անդամներ Լիանա Ղալթաղչյանը, Միքայել Խաչատրյանը, Իրինա Փիլոյանը և Հերիքնազ Տիգրանյանը:

Նիստը վարում էր՝ Հ.Տիգրանյանը: Մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Սուսաննա Դավթյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Հ.Տիգրանյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար հավակնորդների փաստաթղթերը, որը տրամադրվել էր մրցութային խորհրդին: Մրցույթի համար դիմել են չորս հավակնորդ: Ներկայացված փաթեթների ամբողջականության վերաբերյալ դիտողություններ չեն եղել Խորհրդի անդամների կողմից:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթի փաստաթղթային փուլի ավարտը և հաստատեց հայտերը, ըստ որի մրցույթի հարցազրույցի փուլ են անցնում հավակնորդներ Դավիթ Սարգսյանը, Վարդան Գրիգորյանը, Տաթևիկ Բարսեղյանը և Համազասպ Դանիելյանը:* *Կողմ 4, դեմ 0:*
Օրակարգի 2-րդ հարց	Քանի որ Խորհրդի նիստերի անցկացման վայրը օրենքով սահմանված է ԱԺ շենքը, ուստի առաջարկվեց հարցազրույցը անցկացնել 24.05.2021թ.,ԱԺ վարչական շենքում, 414 սենյակում, ժամը 10:00-ից:
Խորհրդի	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հարցազրույցն անցկացնել*

որոշումը	*24.05.2021թ., ԱԺ վարչական շենքում, 414 սենյակում, ժամը 10:00-ին:*
Օրկարգի 3-րդ հարց	Առաջարկվեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել 1 ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ դիմումները ներկայացնելու ժամանակագրության կամ այբբենական կարգով:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց յուրաքանչյուր հավակնորդի համար հարցազույցի տևողությունը սահմանել 1 ժամ, իսկ հերթականությունը՝ ըստ դիմումները ներկայացնելու ժամանակագրության:*

Նիստը վարող՝ Հ. Տիգրանյան

Նիստի քարտուղար՝ Ս. Դավթյան